

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ



ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բուհական համակարգում ակադեմիական ազատությունների հիմնախնդիրը ծագեց Բոլոնյան գործընթացի մեկնարկի նախաշեմին: 1988 թ. սեպտեմբերի 18-ին Բոլոնիայում, աշխարհի հնագույն համալսարաններից մեկի հիմնադրման 900-ամյակի հանդիսության օրերին, մի շարք երկրների համալսարանների ղեկավարներ ստորագրեցին «Համալսարանական ազատությունների խարտիա»-ն՝ կոչ անելով բոլոր պետություններին՝ ընդունել հիմնարար սկզբունքներ, որոնք պետք է աջակցեն համալսարանների կրթական գործունեությանը: Ըստ նշյալ խարտիայի՝ համալսարանը աշխարհագրորեն և պատմական տարբեր ժառանգությամբ ձևավորված ինքնավար հաստատություն է, որտեղ հասարակության կարիքների բավարարման համար իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և ուսուցումը պետք է անկախ լինեն քաղաքական և տնտեսական իշխանությունից:

Գիտահետազոտական աշխատանքների և ուսուցման ազատությունը բուհական կյանքի հիմնարար սկզբունքն է: Մեր ժելով անհանդուրժողականությունը և ընդունելով երկխոսության ձևը՝ համալսարանը դասախոսների համար կատարյալ միջավայր է՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և գիտելիքներ փոխանցելու, իսկ ուսանողների համար՝ այդ գիտելիքները յուրացնելու համար: Յուրաքանչյուր համալսարան, ելնելով իր հնարավորություններից, պետք է ապահովի ուսանողի ազատությունները և կրթություն ստանալու բավարար պայմանները¹:

Հաշվի առնելով այս ամենը՝ մեր հանրապետությունում օրենսդրորեն ամրագրվեց համալսարանական համակարգում ակադեմիական ազատությունների առկայության անհրաժեշտությունը: Այսպես, օրենսդրորեն ամրագրվեց, որ «Պետության քաղաքականությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում բուհերի ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելն է»²:

Ուսանողի ակադեմիական ազատությունները

Կրթական գործընթացը ավանդաբար աչքի է ընկել իր պահպանողականությամբ և ուսուցչակենտրոն հստակ դրսևորումներով: Սովորողների իրավունքները կրթական գործընթացում միշտ էլ ցայտուն չեն դրսևորվել և առավելապես առնչվել են ակադեմիական պարտականություններին: Մեր ժամանակներում, պահպանելով ակադեմիական պարտականությունները, հատկապես բուհերի ուսանողությանը

¹ Տե՛ս **Ս. Երիցյան, Ա. Ճուղուրյան**, 100 հարց և պատասխան Բոլոնյան գործընթացի մասին, Եր., 2007, էջ 156:

² «ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», Եր., 2004, հոդված 4, կետ 7:

տրամադրվում են հնարավորինս ակադեմիական ազատություններ, ինչն ունի իր պատճառները:

Նախ, տեղեկատվական հասարակության կառուցման դարաշրջանում ուսանողը ոչ միայն քաջատեղյակ պետք է լինի իր ուսումնառության կազմակերպման «խոհանոցին», այլև, որպես պատվիրատու, պետք է ի վիճակի լինի իր չափով մասնակցելու կրթական ծառայությունների մատուցման բարեփոխումներին: Անհատի ձևավորման նպատակը գիտելիքահենք տնտեսությունում ոչ միայն մասնագետ պատրաստելն է, այլև սեփական նախաձեռնությամբ որոշումներ կայացնող, գործնական իրավիճակներում ճկուն կողմնորոշվող, հմտություններով օժտված մարդ-քաղաքացի դաստիարակելն է:

Հետևաբար, որակյալ կրթական ծառայությունների մատուցման շնորհիվ, բուհի ուսանողի մասնագիտական գիտելիքների յուրացմանը զուգահեռ, ներկայումս արևմտյան համալսարաններում ավելի է կարևորվում ակադեմիական ինքնակառավարման հմտությունների ուսուցանումը և այդ ոլորտում ուսանողների՝ սեփական նախաձեռնությամբ որոշումներ ընդունելու հմտությունը: Մասնավորապես, միտում է նկատվում ուսանողի լսարանային ժամերի կրճատման, անհատական աշխատանքի շրջանակների ընդլայնման, ակադեմիական աշխատաժամանակի կառավարման ինքնավարության աստիճանի բարձրացման հարցերում: Սովորողին տալով ակադեմիական աշխատաժամանակի ազատություններ՝ բուհը «գրավիչ» է դառնում ուսանողի համար, վերջինիս հնարավորություն է ընձեռում սեփական նախաձեռնությամբ տնօրինելու իր աշխատաժամանակը և նույնիսկ ժամանակ գտնել աշխատելու՝ կրթավճար հայթայթելու նպատակով: Դրանով իսկ բուհը ուսանողին անուղակիորեն սովորեցնում է տնօրինել սեփական ժամանակը և ձեռք բերել կառավարման հմտություններ, որոնք անհատի կյանքում նույնքան կարևոր են, որքան մասնագիտական լուրջ ունակությունները:

Ակադեմիական ազատությունները հաճախ շաղկապվում են ուսանողի ակադեմիական ինքնավարության հետ: Բուհի ուսանողին՝ որպես կրթական ծառայությունների մատուցման պատվիրատուի, որոշակի սահմաններում հնարավորություն է տրվում սեփական նախաձեռնությամբ ընտրելու իր ուսումնառության տարիները, կրեդիտների կուտակման ծանրաբեռնվածությունը՝ դրանով իսկ առավել ճկուն դարձնելով ուսումնառությունը: Ուսումը առավել գրավիչ է դառնում նաև այն պարագայում, երբ ուսանողը ակտիվորեն մասնակցում է իր ուսումնական պլանի կառուցմանը, սեփական նախասիրությամբ ընտրելով մոդուլներ և անգամ դասխոսներ: Ուսումնառության տարիներին դառնալով շարժունակ՝ ուսանողները կարող են կրեդիտներ կուտակել նույնիսկ այլ բուհերից:

Եվ վերջապես, դառնալով կրթական գործընթացի առանցքային սուբյեկտ, ուսանողությունը պարտադրված է մասնակցելու բուհի կառավարմանը՝ իր ներկայացուցչությունը ունենալով գիտական և ֆակուլտետային խորհուրդներում, պաշտպանելու սովորողների շահերը, կայացնելու կրթական բարեփոխումներին առընչվող կառավարչական որոշումներ: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում պետական բուհերի կառավարման խորհրդում ներկայումս պարտադիր ընդգրկվում են ուսանողության ներկայացուցիչներ³:

Այսպիսով, համալսարանական համակարգում արդիական է համարվում «ուսանողակենտրոն» կրթական մշակույթի ձևավորումը հետևյալ հիմնական բաղադրիչներով.


³ Տե՛ս նույն տեղը, հոդված 15, կետ 2:

1. պասիվ ուսումնառության փոխարինում ակտիվ կրթությամբ,
2. ուսումնառության ծանրության կենտրոնի տեղափոխում տեսականից դեպի կիրառական ոլորտ,
3. ուսանողի հաշվետու լինելու ունակությունների զարգացում և պատասխանատվության բարձրացում,
4. ուսանողի ինքնուրույն գործելու հմտությունների զարգացում,
5. դասախոս-ուսանող հարաբերությունների նոր որակ՝ հիմնված անհատական աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու վրա,
6. դասախոսների և ուսանողների երկուստեք ստեղծագործական մոտեցում դասավանդման և ուսումնառության գործընթացներին⁴:

Թեև ՀՀ-ում գործող Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքում բուհի ինքնավարության, իրավասության և ակադեմիական ազատությունները ներկայացնելիս (հոդված 6) անդրադարձ չի կատարվում ուսանողության ակադեմիական ազատություններին, այնուամենայնիվ դրանց հատկացվել են օրենսդրական որոշ ամրագրումներ: Այսպես, բուհի ուսանողը իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ամբիոնները⁵: Բացի այդ, նա կարող է մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան⁶: Հետևաբար, ուսանողին տրամադրվող ակադեմիական ազատությունների շրջանակը կարող ենք քննարկել մի քանի տեսանկյունից (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ուսանողության ակադեմիական ազատությունները և իրավասությունները



⁴ Տե՛ս S. J. Lea, D. Stephenson and J. Troy, Higher Education Students’ Attitudes to Student Centred Learning: Beyond “educational bulimia”. Studies in Higher Education, 2003, 28 (3), էջ 322:

⁵ Տե՛ս «ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, կետ 3, ենթակետ 1:

⁶ Տե՛ս նույն տեղը, ենթակետ 2:

Ուսանողը և ուսումնառության պլանի կազմումը

Ի տարբերություն դասախոսակենտրոն ուսուցման, որի հիմքում ընկած է *դասախոսից - ուսանող* գիտելիքի փոխանցման գործընթացը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպման պարագայում առանցքային է դառնում այն հարցադրումը, թե «ի՞նչ պետք է անի ուսանողը, և ոչ թե՝ դասախոսը»⁷: Հետևաբար, ուսանողը ակտիվորեն միջամտում է իր ուսումնական պլանի բովանդակության ձևավորմանը՝ իրացնելով իրեն ընձեռված հնարավորությունները ոչ պարտադիր մոդուլների ընտրության ոլորտում:


Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կրթական չափորոշիչներում ընդգրկված ոչ պարտադիր (ընտրովի) մոդուլների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 30%: Ուստի ուսանողը, իր նախասիրություններից ելնելով, ընտրում է ոչ միայն կրթական մոդուլ, այլև դասավանդողին: Ակադեմիական նման ազատությունը էապես նպաստում է կրթական ծառայությունների պատվիրատուի (ուսանողի) ուսումնական նախասիրությունների բավարարմանը, սակայն դրան գուզընթաց մեծացնում է նաև ուսանողի պատասխանատվության աստիճանը իր իսկ կառուցած ուսումնառության բովանդակության որակը ապահովելիս:

Ուսանողի աշխատաժամանակի ծանրաբեռնվածության ազատությունները ընդլայնվում են նաև համալսարանի կողմից գիտելիքների բազմագործոնային գնահատման համակարգ կիրառելիս, երբ միջանկյալ և ամփոփիչ քննություններից բացի՝ մոդուլի յուրացումը գնահատվում է անհատական աշխատանքով, դասերին հաճախումների աստիճանով, գործնական աշխատանքներին մասնակցելու ակտիվությամբ: Հետևաբար, ուսանողն ինքն է որոշում իր գնահատականի ձևավորման վերը թվարկած «որոշիչ ուղղությունները»:

Այսպես, եթե ուսանողը բարեխղճորեն հաճախել է դասերին և ակտիվորեն մասնակցել գործնական ու սեմինար պարապմունքներին՝ վաստակելով տվյալ մոդուլի գնահատականի ձևավորման բարձր վարկանիշ, ապա կարող է ինչ-որ չափով «լիցքաթափվել» և համեմատաբար քիչ ժամանակ տրամադրել միջանկյալ ու ամփոփիչ քննություններին նախապատրաստվելուն, և հակառակը: Դրանով ուսանողին որոշակի ազատություններ են տրվում ակադեմիական աշխատաժամանակի կառուցվածքը ձևավորելիս:

Գծապատկեր 2

Ուսանողի ակադեմիական ժամային ծանրաբեռնվածության կառուցվածքը



⁷ Տե՛ս **R. M. Harden, and J. Crosby.** AMEE Guide N 20: The good teacher is more than a lecturer-the twelve roles of the teacher. Medical Teacher, 2000, 22 (4), էջ 335:

Ուսանողներին տրամադրվող ակադեմիական ազատությունների ընդլայնման պարագայում, որպես կանոն, ուսումնառության զգալի մասը կատարվում է լսարանից դուրս, որի շնորհիվ ուսանողները գործուն մասնակցություն են ունենում իրենց իսկ ուսումնառության պլանավորմանն ու կազմակերպմանը⁸: Կրթական ծառայությունների մատուցման նման պայմաններում ուսանողները ոչ միայն կարող են ընտրել, թե *ի՞նչ* կարող են սովորել, այլև՝ պատկերացնել, թե *ինչու՞ և ինչպե՞ս* սովորել⁹:

Հետևաբար, ակադեմիական ազատությունների ընդլայնմամբ մեծանում է նաև ուսանողի պատասխանատվությունը գիտելիքների յուրացման բնագավառում, քանի որ զուգահեռաբար փոքրանում է դասախոսությունների ծավալը (տե՛ս գծապատկեր 2): Միաժամանակ ձևավորվում է դասախոս-ուսանող հարաբերությունների նոր որակ՝ հիմնված անհատական աշխատանքի ստեղծագործական կազմակերպման և դասախոս-ուսանող որակական հարաբերությունների վրա: Այդ դեպքում մեծանում է ակադեմիական ազատությունների շրջանակը, քանի որ հաղորդակցային ժամերի ծանրության կենտրոնը ուսանողական հոսքերից տեղափոխելով անհատ ուսանողի կողմը, ուսանողներն ու դասախոսները հետզհետե հրաժարվում են ուսուցման ավանդական եղանակներից և կրթական ծառայություններ մատուցելիս՝ ցանկացած պարագայում երկուստեք ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում:

Ուսանողի ակադեմիական իրավասությունների ընդլայնումը

Բուհի ուսանողը իրավունք ունի մասնակցելու ուսումնական հաստատությունների կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին, որը նախատեսված է օրենքով կամ համալսարանի կանոնադրությամբ¹⁰: Սակայն, դրա հետ մեկտեղ, կրթական բարեփոխումների ներկայիս գործընթացը դեռևս մտահոգիչ թերություններ ունի, մասնավորապես.

- ♦ ուսանողության ճնշող մեծամասնությունը հիմնականում օտարված է կրթական բարեփոխումների գործընթացից,

- ♦ դեռևս ցածր է կրթական բարեփոխումների գործընթացին մասնակցող ուսանողության՝ որոշումներ կայացնելու պատրաստականության աստիճանը:

Այս առումով կարևոր է «սել» ուսանողներին և հաշվի առնել նրանց վերաբերմունքը բուհական համակարգում ընթացող կրթական բարեփոխումների վերաբերյալ:

Չնայած կրթական համակարգին առնչվող ուսանողական ակադեմիական ազատությունների օրենսդրական ամրագումների առկայությանը՝ համալսարանները «իններցիայի ուժով» շարունակում են դասախոսակենտրոն ուսուցումը, իսկ ուսանողները կրավորական մոտեցում են ցուցաբերում իրենց ընձեռված ակադեմիական ազատությունների հանդեպ:

Սակայն միայն ավանդույթի ուժը չէ, որ խոչընդոտում է ակադեմիական ազատությունների շրջանակի ընդլայնմանը ՀՀ բուհերում: Պետական, առավել ևս մասնավոր համալսարաններում չեն ձևավորվում ֆինանսատնտեսական այն անհրաժեշտ միջոցները, որոնք նպաստում են այս գործընթացի աշխուժացմանը: Այսպես,

⁸ Տե՛ս **Ս. Կարաբեկյան**, Կրթական բարեփոխումներ, ուսանողական չափումը, «Կրթական բարեփոխումները ուսանողության աչքերով» գիտաժողով, Եր., 2008, էջ 24:

⁹ Տե՛ս **P. Burnard**, Carl Rogers and postmodernism: Challenged in nursing and health sciences. Nursing and Health Sciences, 1999, 1, էջ 244:

¹⁰ Տե՛ս «ՀՀ օրենքը Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», հոդված 17, կետ 3, ենթակետ 4:

ուսանողի անհատական աշխատանքի ծանրաբեռնվածությունը ենթադրում է համակարգչային սրահների և գրադարանային հարուստ ֆոնդի առկայություն, իսկ ընտրովի կրթական մոդուլների ընդլայնման պահանջը ենթադրում է լսարանային բավարար ֆոնդ և պրոֆեսորադասախոսական համակազմի ճկուն կառավարում, պահանջ, որը դեռևս չեն կարողանում բավարարել ՀՀ բուհերը:

Բացի այդ, ակադեմիական ազատությունները առավել արդյունավետ են իրացվում ուսանող-դասախոս-բուհ հարաբերությունների փոխվստահության մթնոլորտում: Սակայն, փոխվստահության նման մթնոլորտ մեզանում դեռևս լիարժեք չի ձևավորված: Այսպես, ՀՀ բուհերը առայժմ ակադեմիական կրեդիտների փոխանակման հնարավորություններ չեն ստեղծում՝ դրանով սահմանափակելով ուսանողների միջբուհական շարժունակությունը: Կրթական գործընթացի հիմնական և որոշիչ գործոն է համարվում դասախոսությունը, և կրթության որակի ապահովման առումով դեռևս վստահություն չի նկատվում ուսանող-դասախոս անհատական աշխատանքի, առավել ևս սովորողների ինքնուրույն աշխատանքի նկատմամբ:

Ուսանողները ակտիվ չեն նաև բուհի կառավարման համակարգում իրենց լիազորությունները իրացնելիս: Մի կողմից, դեռևս իշխում է այն թերահավատությունը, որ «ուսանողական ձայնը», միևնույն է, չի հասնելու բուհի վարչակազմին, մյուս կողմից, մեր ուսանողը դեռևս «պատրաստ չէ» կրթական համակարգում կառավարչական որոշումներին մասնակցելու՝ իր տեղեկացվածության ցածր աստիճանի և փորձի պակասի պատճառով: Հետևաբար, ուսանողին ընձեռված ակադեմիական ազատությունների լիարժեք իրացման խնդրի նկատմամբ պետք է ցուցաբերել համալիր մոտեցում, ոչ միայն իրականացնելով բարեփոխումներ օրենսդրական դաշտում, այլև կատարել խոշոր ֆինանսական ներդրումներ կրթական ծառայությունների ոլորտում:

Ս. Ս. ԵՐԻՑՅԱՆ,
Ա. Գ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ